# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**

***«ՈՒՐԱՍԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ***

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

**(2024-2029թթ)**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան 3

2. Դպրոցի առաքելությունը 4

3. Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ 6

4. Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության վերլուծության և նպատակադրման ոլորտները 11

5.ՈՒսումնական հաստատության գործունեության՝ առանձնացված յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրները 30

6.Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործունեությունները,կատարողները, ժամանակացույցը և հնարա վորֆինանսական ծախսերը:

6.1Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցությանն ուղղ ված գործողությունները 32

7.Ծրագրի արդյունքների գնահատման չափանիշները, վերահսկողությունը 55

8.Ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության

կատարողական 56

9.Հավելված 60

## Նախաբան

Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից:
Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է,որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն և սերունդներին փոխանցելուն: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակըմասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Հայաստանի Հանրապետության կրթականհամակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:
Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է:
«Ուրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2029թթ. զարգացման ծրագիրը մշակվել է ՀՀ «Կրթության մասին օրենք», ՀՀ «Հանրակրթության մասին օրենք» , ՀՀ օրենք «ՊՈԱԿ-ի մասին» , ՀՀ օրենք «Երեխաների իրավունքների մասին օրենք»,ՀՀ օրենք «Լեզվի մասին», Ուսումնական հաստատության կանոնադրության կետերի իրավական հիմքերով և 22.09.2022թ. ԿԳՄՍ նախարարի N35-ն հրամանի համապատասխան՝ հաշվի առնելով դպրոցում առկա հիմնախնդիրները: Ծրագրի հիմքում դրվել են նաև ՀՀ Կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը,ինչպես նաև՝ Ուրասար համայնքի առանձնահատկությունները:2024-2029թթ .. զարգացման ծրագրի նպատակներից է դպրոցի շենքային պայմանների բարելավումը, նյութատեխնիկական բազայի հարստացումը, դպրոցի ֆինանսական գործունեության ընդլայնումը և խորհրդակցական մարմինների ակտիվ գործունեությունը , համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ, ուսումնական միջավայրի բարենպաստ պայմանների ստեղծումը ըստ ժամանակակից ՀՊՉ-ի:
Դպրոցի զարգացման ծրագիրը մշակելիս առաջին հերթին անհրաժեշտ է ձևակերպել կամ հստակեցնել նրա առաքելությունը: Միայն դրանից հետո կարելի է որոշել հաստատության նպատակներն ու վերջինս իրականացնելու խնդիրները:

## ՌԷրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի առաքելությունն է՝

*Դպրոցը դարձնել յուրաքանչյուր աշխատողի և սովորողի ստեղծագործական կարողությունները, նախասիրությունները բացահայտող և խթանող, անձի համակողմանի ձևավորմանը նպաստող, որակյալ կրթություն ապահովող կրթական կենտրոն.սովորել սովորեցնել, մտածել ու ստեղծագործել սովորեցնելու մեջ:*

Պետության և ազգի անվտանգության ապահովման և հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ անձի ձևավորումը:

- ✓ Յուրաքանչյուր երեխայի համար ստեղծել կրթական միջավայր, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, առանձնահատուկ ուշադրության կենտրոնում պահել օժտված, ընդունակ կամ որևէ բնագավառում
- ✓ հետաքրքրություն դրսևորած աշակերտին, ընդգրկել խմբակներում , խթանել նրա նախասիրությունները:
- ✓ Ապահովել համայնքի ներգրավվածությունը՝ կրթության որակի բարելավման նպատակով, համագործակցության և փոխվստահության ակնկալիքով:
- ✓ Պատրաստել անհատ, ով համարժեք գնահատում է իրավիճակը, սեփական հնարավորությունները և պատրաստ է լուծումներ գտնել:
- ✓ Դաստիարակել հայ, ով գիտակցի իր ազգային յուրահատկությունը, մշակույթի բացառիկությունը և գիտակցի իր՝ պահպանողի և փոխանցողի դերը:Ուսումնադաստիարակչական աշխատանքի հիմքում պետք է դրվի ազգային արժանապատվություն ունեցող հայ մարդու դաստիարակությունը,ով ճանաչում, ընդունում և հարգանքով է վերաբերվում իր և ուրիշ ժողովուրդներին, նրանց ստեղծած հոգևոր և մշակութային արժեքներին:
- ✓ Դպրոցի լիարժեք գործունեության համար պետք է նպաստել սովորողի մոտ մարդասիրական, ազգային համամարդկային արժեքների ձևավորմանը,սերմանել արժանապատվություն, հայրենասիրություն, պատասխանատվություն, Հանդուրժողականություն:
- ✓ Ուսումնական միջավայրը դարձնել անվտանգ, հիգիենիկ, հետաքրքիր, գեղագիտական:

Դպրոցի առջև դրված առաքելությունն իրականացնելու համար դպրոցումաշխատում է մանկավարժական թիմ՝ պատրաստ միմյանց աջակցելու, համագործակցելու, ինքնակրթվելու և կրթելու:

***Ըստ այդմ՝ կարևորում ենք հետևյալ գործոնները.***

- Դպրոց՝ բոլորի համար: Դպրոց, որտեղ կարող են հաջողությամբ սովորել և օժտված, և սովորական երեխաները:

- Յուրաքանչյուր երեխա ունակ է սովորելու, սակայն յուրաքանչյուրն ունի զարգացման իր հետագիծը: Ապահովել սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին բնորոշ յուրաքանչյուր երեխայի ներառվածությունն ուսումնառության գործընթացի մեջ՝ աշակերտի մտավոր և ֆիզիկական կարողությունների առավելագույն ներուժին համապատասխան:
- Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց:

- Դպրոցում ապահովել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կրթության մատչելիությունը:
- Դպրոցում զարգացնել յուրաքանչյուր երեխայի բնատուր ունակությունները՝ ուսուցումն իրականացնելիս շեշտադրում կատարելով ոչ թե մի քանի «ընտրյալ» ընդունակների, այլ երեխաների հիմնական զանգվածի վրա՝ ուշադրությանկենտրոնում պահելով թույլ առաջադիմություն ունեցողների կրթական պահանջմունքների բավարարման խնդիրները:
- Հետագա կյանքում սովորողների ինքնա- հաստատման համար ապահովել անհրաժեշտ կոմպետենցիաների ձեռքբերման բարենպաստ կրթական միջավայր:

*Ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցովձևավորել՝*

- համակողմանիորեն զարգացած,
- մասնագիտորեն կողմնորոշված,
- ազգային արժեքներ կրող,
- հայրենասեր,
- գլոբալիզացիայի մարտահրավերներին պատրաստ,
- համաշխարհային աշխատաշուկայում կողմնորոշվող և մրցունակ,
- մարդասիրության ոգով դաստիարակված կոմպետենտ քաղաքացիներ:

## *Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ*





**Հաստատության անվանումը ............................ՀՀ Լոռու մարզի ,,Ուրասարի հիմն. դպրոց,, ՊՈԱԿ**

**Հաստատության հասցեն**.........................................................................**գ. Ուրասար**

**Հաստատության հեռախոսահամարը** ..............................................093813555

**Էլեկտրոնային հասցեն** - ........................................................urasar@schools.am

## ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Համաձայն մեր կողմից ուսումնասիրված արխիվային փաստաթղթերի՝ գյուղը հիմնվել է 1815 թվականին, ուր հիմնականում ապրել են ռուսներ. կոչվել է Պոկրովկա:
Ուրասար (նախկին անվանումները՝ *Կույբիշև*, *Նովոպոկրովկա*), գյուղ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանում՝ Ստեփանավան քաղաքից մոտ 7 կմ արևմուտք, Ձորագետի աջ կողմում: Գյուղը վերանվանվել է 1939 թվականի մայիսի 4-ին[3], Ուրասար՝ 1991 թվականի օգոստոսի 8-ին[4]:
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1525 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 33 կմ հյուսիս-արևմուտք:



*Եկեղեցի Ուրասարում*



*Շուշանալիճ*

Դպրոցը հիմնադրվել է 1905-ական թվականներին, այն եղել է եկեղեցուն կից, ուր դասավանդել է գյուղի քահանան: Դպրոցն ունեցել է երեք դասարան:
Մոտավորապես 1919-1920 թվականներին դպրոցը դարձել է չորսդասյա, այդնույն ժամանակահատվածում գյուղը վերանվանվել է Կույբիշևո:

1925թ. կառուցվել է դպրոցի շենք, որտեղ դասասենյակները քիչ լինելու պատճառով դասերն ընթացել են երկու հերթով:
1930-ական թվականներից գյուղում ապրել են նաև հայեր: Հայրենական մեծ պատերազմից հետո գյուղի դպրոցը դարձել է յոթամյա:
1954-56 թվականներին կառուցվել է դպրոցի նոր շենք՝ մեկ հարկով: Անցյալ դարի 60- ական թվականներին դպրոցն ապրել է խորհրդային տարիների բուռն կյանքով, դպրոցում գործել է բալալայկայի լարային խմբակ, որն իր համերգային հյուրախաղերով հայտնի է եղել ողջ տարածաշրջանում:
1978 թվականին կառուցվել է դպրոցի շենքի երկրորդ հարկը:
1989 թվականին բացվել է առաջին հայկական դասարանը:
1994 թվականից դպրոցը դարձել է հայկական, ութամյա: Նույն թվականին գյուղը վերանվանվել է Ուրասար
2000 թվականին կառուցվել է դպրոցի նոր շենքը՝ 100 աշակերտի համար, որի կառուցումն առ այսօր կիսավարտ է:

Ներկայումս դպրոցը հիմնական է: Դասասենյակների և աշակերտների պակասի պատճառով գործում է երկհամակազմ դասարաններ: Ունի 49 աշակերտ:
Դպրոցի կանոնադրությունը վերահաստատվել է 10.08.2017թ., իսկ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում վերագրանցվել է 16.08.2017թ.:
ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. օգոստոսի 11-ի թիվ 941-Ա/Ք հրամանով դպրոցին տրվել է կրթական գործունեության լիցենզիա՝
տարրական հանրակրթական /40 տեղ/
հիմնական հանրակրթական /60 տեղ/
կրթություն իրականացնելու:
Դպրոցի տանիքը հիմնանորոգվել է՝ /2014թ/:
Դպրոցն այսօր ունի 7 դասասենյակ,գրադարան,ՆԶՊ կաբինետ, ուսուցչանոց, ճաշարան, լվացարան, ֆուտբոլի հրապարակ:

Ներկա՝ 2023-2024 ուստարում դպրոցը համալրված է 7 դասարանով, որտեղ սովորում են թվով 49 աշակերտներ (տարրական դպրոցում՝ 4 դասարան՝ 24 աշակերտով՝ 11 աղջիկ,13 տղա) հիմնական դպրոցում՝ 5 դասարան՝ 25 աշակերտով՝13աղջիկ,12 տղա):
Դպրոցում աշխատում է 12 ուսուցիչ(3-ը համատեղությամբ), բոլորը ունեն բարձրագույն կրթություն :
Դպրոցն աշխատում է 5-օրյա աշխատանքային շաբաթով:
2023-2024 ուստարվա սկզբից ուսումնական հաստատության ՀՊՉ ներդրված 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների ուսումնական պլանները կազմվել են և դասավանդումն իրականացվում է ՀՀ կառավարության 2021 թվականի
փետրվարի 4-ի N 136-Ն որոշման հիման վրա: Նշված դասարաններում դասավանդող ուսուցիչները, բացառությամբ 2023թ. սեպտեմբերից հետո ընդունված 2 ուսուցիչների, անցել են համապատասխան վերապատրաստման դասընթացներ:
Թեև, 2024թ. հունվարից դպրոցը համագործակցում է Ստեփանավանի ավագ՝ մենթոր դպրոցի հետ, վերջինիս համագործակցությունը լուրջ խթան է նոր ՀՊՉ-ների անխոչընդոտ ներդրման, ինչպես նաև բազմաթիվ նորամուծությունների շուրջ ծագած հարցերը

քննարկելու և դրանց լուծման ճիշտ տարբերակներ մշակելու գործում:
Ուսումնական հաստատության և համայնքի համագործակցությունը շատ թույլ է : Ըստ այդմ՝ մեր դպրոցի զարգացման ծրագրի հիմնախնդիրներից մեկն էլ համայնքի և ուսումնական հաստատության սերտ կապի ապահովումն է, աշխատանքը ծնողների և համայնքի հետ: Համայնքի և ծնողների հետ սերտ համագործակցությունից է կախված նաև ճանաչողական էքսկուրսիաների, արշավների, շաբաթօրյակների, ցերեկույթների, ինչպես նաև տարբեր արտադասարանական միջոցառումների կազմակերպումը, որը նպաստում է կրթադաստիարակչական աշխատանքների ապահովող բովանդակությանը, սովորողների սոցիալական ներգրավվածությանը, հասարակական-քաղաքացիական պատասխանատվության և կարողունակությունների զարգացմանը, պետության և համայնքի նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորմանը: Այստեղ դպրոցը լուրջ և անընդհատական աշխատանք իրականացնելու անհրաժեշտություն ունի:
Զարգացման ծրագիրը մշակելիս, կարիքի բազմակողմանի գնահատում իրականացնելու նպատակով, հանդիպել եմ Ստեփանավանի խոշորացված համայնքի ՏԻՄ-ի,ՈՒրասարի բնակչության, շահառու խմբերի հետ: Նույն նպատակով իրականացրել եմ նաև հանդիպում-քննարկումներ խորհրդակցական մարմինների՝ մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ, ծանոթացել առկա իրավիճակին, խնդիրներին ու հնարավորություններին: Կարիքի ճիշտ և համակողմանի գնահատումը հիմք է դարձել մշակել և ստեղծել աշակերտահեն և համայնքահեն ծրագիր:

Դպրոցում խնդիրներն անթիվ են. սկսած համայնքի կարծրատիպերից, մինչև ֆինանսական միջոցներ, կրթության հանդեպ անտարբեր վերաբեմունք ու դպրոցի շենքային պայմաններ: Դպրոցի շենքը տիպային է,կազմված է երկհարկանի կիսակառույցից և միհարկանի կառույցից՝ անհատական նախագծով:Շենքի հանձման ընդունման ժամանակվանից (2000թ.)երկհարկանի կառույցը չի շահագործվել և պիտանի չի շահագործման:Հիմա օգտագործվում է միայն միհարկանի շինությունը: Դպրոցում առկա է 7 դասասենյակ, 1 առարկայական կաբինետ՝ Armat լաբորատորիա, գրադարան, առկա չէ շուրջօրյա ինտերնետային կապ:
Դպրոցը չունի մարզադահլիճ, չունի նաև ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության լաբորատորիաներ: Չկա շախմատի համար առանձնացված առարկայական դասասենյակ: ԿԱՊԿՈՒ ունեցող աշակերտների համար ևս չկա հարմարեցումներով (ռեսուրս) սենյակ: Սրանք մինչ օրս լուրջ և չլուծված խնդիրներ են՝ նաև դպրոցում դասասենյակների սղության պատճառով: Դպրոցի
ուսուցիչներից 2-ն են ՈՒրասար գյուղի բնակիչ,երկուսը Կաթնաղբյուր գյուղի բնակիչ են, մյուսները Ստեփանավան քաղաքի բնակիչներ են, հետևաբար, ամեն օր աշխատանքի են գալիս Ստեփանավանից: Գյուղի տրանսպորտի հետ կապված դժվարությունները մեծանում են հատկապես ձմռանը:Դպրոցը ջեռուցվում է Էլեկտրական հոսանքով, որը նույնպես մեծ խնդիր է առաջացնում ձմռան ամիսներին: Դպրոցում գործում է ճաշարան, ունի վերանորոգման կարիք՝2021թ.-ին համալրվել է խոհանոցային սարքավորումներով ՀՊԾ աջակցությամբ: Սկիզբը դրվել է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում, որն այժմ արդեն շարունակվում է ՀՀ Կառավարության ֆինանսական աջակցությամբ:

Դպրոցում ուսումնական գործընթացն իրականացվում է օրինակելի ուսումնական պլանի հիման վրա՝ տնօրենի կողմից հաստատված ուսումնական պլանով, դրա հենքի վրա կազմված դասացուցակով և տարեկան ուսումնադաստիարակչական

աշխատանքային պլանով, որի հիման վրա էլ դպրոցի մյուս օղակներն են պլանավորում իրենց աշխատանքները:

ՀՀ Լոռու մարզի « ՈՒրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ն ունի 24 աշխատակից:

Վարչական աշխատողներ.

- Տնօրենի պարտ. կատ. – 1
- Վարչատնտեսական համակարգող– 1

Մանկավարժական աշխատողներ.

- Ուսուցիչ – 12
- Գրադարանավար – 1
- Զինղեկ – 1
- ԴԱԿ- 1

Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ.

- Հաշվապահ – 1
- Համակարգչի օպերատոր – 1
- Գործավար -1
- Տնտեսվար – 1
- Հավաքարար – 2
- Պահակ – 1

**Շենքային պայմաններ.**

| Շենքային պայմանները | Քանակը | Մակերեսը՝ Քառ. մ | Փաստացի վիճակը |
|---|---|---|---|
| Տնօրենի կաբինետ | 1 | 12.5 մ$^2$ | բավարար |
| Ուսուցչանոց | 1 | 19 մ$^2$ | բավարար |
| Դասասենյակ | 7 | 269 մ$^2$ | լավ |
| Պահեստ | 2 | 12.5 մ$^2$ | բավարար |
| Ուսուցիչների համար զուգարան /ներսում/ | 2 | 9 մ$^2$ | բավարար |
| Սովորողների համար զուգարան /դրսում/ | 2<br>1 | 12 մ$^2$<br>12.5 մ$^2$ | Լավ<br>բավարար |
| Ճաշարան | 1 | 21 մ$^2$ | բավարար |
| Սննդամթերքի պահեստ | 1 | 6 մ$^2$ | բավարար |
| Գրադարան | 1 | 28 մ$^2$ | բավարար |
| ՆԶՊ-ի սենյակ | 1 | 54 մ$^2$ | լավ |
| Միջանցք | 1 | 103 մ$^2$ | լավ |
| Պահակի սենյակ | 1 | 7 մ$^2$ | բավարար |

## Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեությանվերլուծության և նպատակադրման ոլորտները

- Դպրոցի շենքային պայմանների վերլուծություն
- Նյութատեխնիկական բազան
- Կրթության որակի շարունակական բարձրացում
- Դպրոցի ֆինանսական գործունեությունը
- Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր (դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր), դրանց վարումը
- Կառավարման և խորհրդակցական մարմինները
- Աշակերտական համակազմը
- Մանկավարժական համակազմը
- Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ
- Ուսումնական միջավայրը
- Կրթության որակն՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների
- Տեխնոլոգիաները և նորարարությունները

### Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն

| Հ/Հ | Անվանումը | Նկարագիրը | Առաջարկություն՝ /կարիքի դեպքում/ |
|---|---|---|---|
| 1. | Շենքի տիպը | Տիպային | |
| 2. | 2 մասնաշենք | 1 Ուսումնական<br>1 Կիսակառույց | Կիսակառույցը կարիք ունի վերջնական կառուցման<br>/ հանձնվել է կիսակառույց 2000թ-ից/ |
| 3. | Հարկայնությունը | միհարկանի | |
| 4. | Նկուղային հարկ | Առկա չէ | |
| 5. | Ապաստարան | Առկա չէ | Անհրաժեշտ է |
| 6. | Հանդերձարան՝ միջանցքում | Առկա չէ | Անհրաժեշտ է |
| 7. | Զուգարան | 2 հատ | |
| 8. | Լոգարան | Առկա չէ | |
| 9. | Ջրամատակարարումը | Շուրջօրյա կենտրոնացված | |
| 10. | Կոյուղացումը | Կենտրոնացված | |
| 11. | Ջեռուցումը | Էլեկտրական | Կարիք ունի |

| | | | |
|---|---|---|---|
| | | սալիկներով | ժամանակակից ջեռուցման համակարգի |
| 12. | Դպրոցի կից տարածք | Առկա է | |
| 13. | Բացօթյա սպորտհրապարակ | Առկա է | |
| 14. | Մարզադահլիճ | Առկա չէ | Անհրաժեշտ է |
| 15. | Նիստերի դահլիճ | Առկա չէ | Անհրաժեշտ է |
| 16. | Տնտեսական պահեստ | Առկա է | |
| 17. | Սննդի պահես | Առկա է | |
| 18. | Ճաշարան | Առկա է | |
| 19. | Գրադարան | Առկա է | Կարիք ունի վերանորոգման, անհրաժեշտ է գրադարանի գույք |
| 20. | Բուժսենյակ | Առկա է | |
| 21. | Դասասենյակներ | 7 | Խիստ անհրաժեշտ է դասասենյակների համալրում |
| 22. | Լաբոր ա-տորիա՝ որից Քիմիա | Առկա չէ | Անհրաժեշտ է |
| | Ֆիզիկա | Առկա չէ | Անհրաժեշտ է |
| | Կենսաբանություն | Առկա չէ | Անհրաժեշտ է |
| | Այլ | -------- | |
| 23. | ՆԶՊ կաբինետ | Առկա է | |
| 24. | Համակարգչային կաբինետ | Առկա չէ | Անհրաժեշտ է |
| 25. | Աշխատասենյակ ( վարչական աշխատողների) | Առկա է | |

| ՈԻժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ❖ Դպրոցի տարածքը ցանկապատված է, առանձնացված ճանապարհային գոտուց.<br>❖ Դպրոցի բակն ունի 11000 քառ/մ տարածք, որտեղ տեղակայված է նաև բաց մարզադաշտէ910 քառ/մ<br>❖ Դպրոցի օգտագործվող մասը միհարկանի շինություն է<br>❖ Դպրոցն ունի տարհանման2 ելքեր<br>❖ Դպրոցում պահպանվվում է հակահրդեհային անվտանգությունը<br>Արտակարգ իրավիճակների համար կազմված տարհանման պլանը փակցված է՝ տեսանելի հատվածներում. | ❖ Կիսակառույցը կարիք ունի վերջնական կառուցման<br>❖ Դպրոցն ունի դասասենյակների պակաս ,որը առաջնային հիմնախնդիրներից մեկն է (ունի ընդամենը7 դասասենյակ)<br>❖ Կարիք ունի ժամանակակից ջեռուցման համակարգի |

| | |
|---|---|
| Տեղակայված են 2 կրակմարիչներ՝ կրակմարիչների ցուցատախտակի հետ միասին.<br><br>❖ Առկա է մշտական ջուր. ապահովված է ջրահեռացման համակարգով.<br>❖ Դպրոցը վերահսկվում է 6 տեսախցիկներով<br>❖ ՈՒնի տնօրենի կաբինետ<br>❖ ՈՒնի ուսուցչանոց<br>❖ 7դասասենյակներ<br>❖ ՆԶՊ դասասենյակ<br>❖ ճաշարան<br>❖ Դպրոցի շենքի մուտքի մոտ առկա է թեքահարթակ<br><br>❖ Սանհանգույց՝ աղջիկների, տղանկերի համար դասասենյակների պատուհանները և դռները փոխված են | ❖ Դպրոցը չունի ապաստարան<br>❖ Դպրոցը չունի SMARTսենյակ<br>❖ Դպրոցը չունի մարզադահլիճ, դահլիճ<br>❖ Դպրոցը չունի շախմատիդասասենյակ<br>❖ Դպրոցը չունի համակարգչային սենյակ<br>❖ Դպրոցը չունի տնտեսվարի սենյակ<br>❖ Դպրոցը չունի հոգեբանի սենյակ<br>❖ Դպրոցի տարածքը կարիք ունի բարեկարգման, չունի արտաքին լուսավորություն<br>❖ Սանհանգույցներում չկան հենաշարժողական խնդիրներով սովորողների համար անհրաժեշտ հարմարեցումներ. սանհանգույցներն ունեն մասնակի վերանորոգման կարիք.<br>❖ Դպրոցը չունի հանդիսությունների դահլիճ<br>❖ Չունի առարկայական կաբինետներ, լաբորատորիաներ.<br>❖ Չկա հարմարեցված սենյակԿԱՊԿՈՒ երեխաների համար<br>❖ Դպրոցը ջեռուցվում է հոսանքով, որի հետևանքով հրդեհի առաջացման վտանգ է լինում<br>❖ Գրադարանը ունի վերանորոգման,կահավորման կարիք |

## Նյութատեխնիկական բազան

| Գույք,սարքավորումներ | Քանակը | Վիճակը |
|---|---|---|
| համակարգիչ | 3 | լավ |
| պլանշետ | 8 | լավ |
| պրոյեկտոր | 2 | լավ |
| տպիչ | 2 | լավ |
| սկաներ | 1 | լավ |
| Աշակերտական աթոռ | 25 (կաշվեպատ) ,<br>50 | լավ |
| Աշ. սեղան | 25 | լավ |
| գրատախտակ | 11 | լավ |
| պահարան | 8 | լավ |
| գրապահարան | 2 | լավ |
| Պահարան մետաղյա | 1 | լավ |
| Ուսուցչական սեղան | 7 | լավ |
| Ուսուցչական աթոռ | 10 | լավ |
| Մեծ սեղան | 2 | լավ |
| Փափուկ կահույք | 1 | լավ |
| Լվացարան | 1 | լավ |
| Ճաշարանի պահարան | 1 | լավ |
| սառնարան | 2 | լավ |
| ջրատաքացուցիչ | 1 | լավ |
| Հակահրդեհային վահանակ | 1 | լավ |
| Կրակմարիչ | 2 | լավ |
| Տեսախցիկ | 5 | լավ |

| | | |
|---|---|---|
| Դարակաշար | 1 | լավ |
| Զգեստապահարան | 2 | բավարար |
| Համակարգչային սեղան (արմաթ) | 6 | լավ |
| Մինի համակարգիչ (արմաթ) | 6 | լավ |

## Գրադարանի ֆոնդում առկա է

| N | ՈՒժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|---|
| | 364 անուն գիրք, որից 65 կտոր գեղարվեստական գիրք, 27 կտոր տեղեկատվական գրականություն, ատլասներ, բառարաններ, հանրագիտարաններ՝77 կտոր, ուսումնամեթոդական գիրք-ձեռնարկներ 42 կտոր, 55 կտոր ամսագիր 98 անուն դասագիրք. Նոր գրականությամբ վերջին անգամ գրադարանային ֆոնդը համալրվել է 2016 թվականին: | Գրադարանային ֆոնդն ունի թարմացման կարիք. Անհրաժեշտ է ժամանակակից գեղարվեստական և այլ գրքերի, տեսաերիզների, աուդիոնյութերի համալրում. ընթերցասրահը, որպես այդպիսին, գրեթե չի գործում. |

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|

| | |
|---|---|
| • ՏՀՏ ( 3 համակարգիչ, 1 նոութբուք, 1բազմաֆունկցիոնալ տպիչ սարք, 2 պռոյեկտոր, 8 պլանշետ<br>• Դպրոցն ունի ԱՐՄԱԹ լաբորատորիա ՝ 6 մինի համակարգիչներով<br>• Դպրոցն ունի ճաշարանինոր գույք<br>• Դպրոցն ունի շախմատառարկայի համար անհրաժեշտ գույք<br><br>• Աշակերտական նոր գույք սեղան (25 կոմպլեկտ) , աթոռ (25 կաշվե սպիտակ )<br>• Տարրական դասարանների շախմատի գույք( 2հատ)<br>• Նորագույն տեխնոլոգիաներով հագեցված «Արմաթ» ինժեներական լաբորատորիա<br>• Դպրոցում առկա է կահավորված խոհանոց, որտեղ առկա է գազօջախ, սառնարան, ջրատաքացուցիչ, լվացարան, չժանգոտվող մետաղյա դարակաշար<br>• Դպրոցում առկա է ճաշարան, որտեղ « Կայուն դպրոցական սնունդ» ծրագրով տաք սնունդ են ստանում տարրական դասարանի 24 սովորող | • Դպրոցը չունի ԲՏՃՄլաբորատորիաներ, ժամանակակից սարքավորումներ<br>• Դասասենյակներում հասանելի չէ համացանցը<br>• Դպրոցը չունի մարզագույք<br>• Դպրոցը չունի դիդակտիկպարագաներ<br>• Դպրոցը չունի երաժշտական որևէ գործիք<br>• Դպրոցը չունի բավարար թվով համակարգիչներ<br>• Դպրոցը չունի SMART գրատախտակ<br>• Դպրոցը չունի ձեռնարկներ,ուղեցույցներ, բարձրախոս<br>• Դպրոցը չունի ԿԱՊԿՈՒԵրեխաների համար անհրաժեշտ որևէ պարագա<br><br>• Ներդրված մեթոդառարկայական կաբինետների բացակայություն<br>• Ուսուցչական գույքի՝սեղան-աթոռների նորով փոխարինելու կարիք<br>• Ներառական կրթությունը իրականացնելուն համապատասխան գործիքների ( տարբեր տեսակի դիդակտիկ խաղեր, մոտորիկան զարգացնող, կենտրոնացնող ավազաթերապիայի սեղան)<br>• Թվային գրադարանի բացակայություն<br>• Տեսողական և լսողական խանգարումներ ունեցողների համար ռեսուրսների բացակայություն |

## Նյութատեխնիկական բազայի

ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Աստիճանաբար թարմացնել և ժամանակի պահանջներին համահունչ հարստացնել դպրոցի նյութատեխնիկական բազան:

Առավելագույնս հնարավորություն ստեղծել և ֆինանսական միջոցները ուղղել գույքային համալրմանը,համակարգիչների, լաբորատոր սարքավորումների ձեռքբերմանը, ձևավորմանը, դպրոցական գրադարանի հարստացմանը, ԿԱՊԿՈՒ երեխաների պահանջներին համապատասխան գույքի ձեռքբերմանը:

Վեր հանելով ուսումնական հաստատությունում առկա նյութատեխնիկական բազայի կարիքները՝ զարգացման ծրագիրը մշակելիս նպատակ ունեմ կոնկրետ քայլեր ձեռնարկել այդ բացը լրացնելու ուղղությամբ, որն ուղղակիորեն պետք է նպաստի ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետությանը, ուսուցիչների աշխատանքի,
հետևաբար նաև կրթության որակի բարձրացմանը:

## Դպրոցի ֆինանսական գործունեությունը

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ:

Դպրոցի ֆինանսավորումը կատարվում է ՀՀ հանրապետական բյուջեից ըստ աշակերտների թվաքանակի: Դպրոցը չունի արտաբյուջե, ծնողների կողմից դրամական ներդրումներ, հովանավորչական և դրամաշնորհային միջոցներ: Մեկ սովորողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը աճել է, նախորդ 2 տարիների համեմատությամբաճել է նաև սպասարկող անձնակազմի , ուսուցիչների, վարչական աշխատողների միջին աշախատավարձը : Աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը աճել է:Կոմունալ վճարների գծով նույնպես նվազում է դիտվում, իսկ այլ ծախսերի գծով հաստատության տարեկան ծախսերի չափը չի փոխվել:

**Բյուջեի ծախսի հիմնական ուղղություններն են.**

1. աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ,
2. կոմունալ վճարներ
3. գրասենյակային և տնտեսական ապրանքներ,
4. գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր,
5. կապիտալ ծախսեր,
6. հատուկ նպատակային ծախսեր,
7. այլ ծախսեր:

| **Բյուջեի ծախսի հիմնական ուղղությունները** | 2021-2022 | 2022-2023 | 2023-2024 |
|---|---|---|---|
| • աշխատավարձ ևդրան հավասարեցված վճարումներ<br>• | 23.467.4 | 24.956.3 | 24.978.7 |
| • կոմունալ վճարներ | 599.3 | 574.2 | 561.3 |
| • գրասենյակային ևտնտեսական ապրանքներ | 176.4 | 692.7 | 649.8 |
| • գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր | 1.139.2 | 33.6 | 0 |
| • կապիտալ ծախսեր | 1.798.3 | 0 | 0 |
| • հատուկ նպատակայի նծախսեր | 222.6 | 481.7 | 154.6 |

| | | | |
|---|---|---|---|
| • այլ ծախսեր | 1.440.0 | 1.440.0 | 1.440.0 |

***Դպրոցի բյուջեն 2023թ.*** կազմել է 30.797.0 հազար դրամ, որից աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ՝ 24.978.7 հազարդրամ: Վերջինս կազմում է բյուջեի 90 % տոկոսը: Բյուջեի մոտ 3 % կազմում են կոմունալ վճարները, 3 % տոկոսը՝ «Դպրոցական տաք սնունդ» ծրագրին ուղղված միջոցներն են: Մնացած 4% տոկոսն իր մեջ ներառում է դպրոցի համար ընթացիկ կատարվող ծախսերը (գրենական պիտույքներ, տնտեսական ապրանքներ, անվտանգություն, գնումներ, ուսուցիչների վերապատրաստման ծախսեր, «Կրթություն» թերթի բաժանորդագրություն, հայտարարության տեղադրում ):

Իմ ծրագրով առաջիկա 5 տարիների ընթացքում միջոցներ պետք է ձեռնարկվեն դպրոցի արտաբյուջետային միջոցների հայթայթման համար, որը կծառայի հետևյալ նպատակների համար՝

- ❖ դպրոցի շենքի, շրջակայքի պայմանների բարելավում
- ❖ ԲՏԾՄ- լաբորատորիայի ստեղծում
- ❖ ԿԱՊԿՈՒ երեխաների համար անհրաժեշտ պարագաներ
- ❖ Ֆինանսների օգտագործման թափանցիկության ապահովում և կոլեկտիվի իրազեկվածություն
- ❖ գրադարանային ֆոնդի հարստացում և համալրում
- ❖ էլեկտրոնային գրադարանի ձեռքբերում
- ❖ համակարգիչների ձեռքբերում
- ❖ համակարգչային սենյակի ստեղծում
- ❖ ուսումնական ձեռնարկների, ուղղեցույցների համալրում
- ❖ մանկավարժական համակազմի մասնագիտական վերապատրաստմանն ուղղված ծախսեր

## Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

**(դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր), դրանց վարումը**

*Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով՝*




Դպրոցին վերաբերող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով: Անհրաժեշտության դեպքում մշակվում և գործածության մեջ են դրվում ներքին գործածության համար նախատեսված իրավական նոր ակտեր (օրինակ՝ներքին կարգապահական կանոններ, աշխատակարգեր և այլն):

Դպրոցավարությունն իրականացվում է սահմանված կարգով:

Դպրոցի գործունեության փաստաթղթերը կատարվում է մասամբ էլեկտրոնային:

Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողություն անցկացնելու նպատակով:

## Կառավարման և խորհրդակցական մարմինները

Դպրոցը սերտորեն համագործակցում է և՛ կառավարման, և՛ խորհրդակցական մարմինների հետ.

դպրոցի գործունեությունը բաց է և թափանցիկ:




- ***Կառավարման խորհուրդը*** գործում է հարակից գյուղի՝Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոցի խորհուրդի հետ միացյալ :Վերջինիս գործունեությունը միտված է դպրոցների բնականոն զարգացմանը, խորհուրդը շահագրգիռ է դպրոցների առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին:

ՈՒրասարի հիմնական դպրոցի և Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոցի միացյալ խորհրդիկազմ.

Հաստատված՝ 10 մայիսի 2021թ. թիվ231-Ա

***Տվյալներ ուսումնական.հաստատության կառավարման խորհրդի կազմի վերաբերյալ***

| ***Մանկավարժական խորհրդի կողմից*** | ***Ծնողակա նխորհրդի կողմից*** | ***Համայնք իկողմից*** | ***ԿԿԼՄ-ի կողմից*** | ***ԿԳՄՍՆ-ի կողմից*** |
|---|---|---|---|---|
| *Մանուկյան Սամվել* | *Աղաբաբյա ն Տիգրանուհ ի* | *Քալանթարյա նԼևոն* | *Մխոյան Արամ* | *Սուքիասյա նՍմբատ* |
| *Հայրապետյա նՆոնա* | *Ջանոյա ն Լիաննա* | *Շահբազյա նՄհեր* | *Մանասյա նԼաուրա* | *Միրզոյա նԱրթուր* |
| *Հովհաննիսյա նԷդվարդ* | *Մուրադյա նԱնյուտա* | | | |
| *Մկրտչյան Գայանե* | *Ավետիսյա նԱրմինե* | | | |

*Կազմը համապատասխանում է անհրաժեշտ պահանջներին, առաջադրված խնդիրներըկատարվում են խորհրդի կողմից, ժամանակին գումարվում են նիստեր: Խորհրդի գործունեությունը բաց է, կայացված որոշումները կրում են կոլեգիալ բնույթ:*

- ***Մանկավարժական խորհուրդը*** պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները, հիմնականում գումարվում է բոլոր անդամների մասնակցությամբ, քննարկում է նաև զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անդրադառնում է ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար:

**Դպրոցի մարդկային ռեսուրսներ**

| | |
|---|---|
| Վարչական աշխատողներ | 2 |
| Սովորողների թիվը | 49 |
| Ուսուցիչների ընդհանուր թիվը | 12 |
| Բարձրագույն կրթությամբ ուսուցիչներ | 12 |
| Տարրակարգ ունեցող ուսուցիչներ | 0 |
| Հոդված տպագրած ուսուցիչներ | 1 |
| Կամավոր ատեստավորված ուսուցիչներ | 0 |
| Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ | 3 |

| | |
|---|---|
| Առարկայական մ/մ | 2 |
| Գրադարանավար | 1 |
| ԴԱԿ | 1 |
| Ուսուցչի օգնական | 0 |
| Ջինդեկ | 1 |
| Օպերատոր | 1 |
| Հաշվապահ | 1 |
| Հոգեբան | 0 |
| Գործավար | 1 |
| Սպասարկող անձնակազմ | 5 |

- ***Աշակերտական խորհուրդն*** ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունըխթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը: Աշակերտական խորհուրդը հանդես է գալիսմի շարք առաջարկություններով, ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը, սովորողների արտաքին տեսքին և կեցվածքին, պայքարում ուշացումների դեմ, կազմակերպում է միջոցառումներ, հանդիպումներ, ճանաչողական այցեր:

  Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերըհստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

*Տվյալներ հաստատության գործունեությանը սովորողների մասնակցության վերաբերյալ*

| **Ցուցանիշ** | **2021-2022 ուստ արի** | **2022-2023 ուստ արի** | ***2023-2024*ուստ արի** |
|---|---|---|---|
| Դեպքերի թիվը, երբ սովորողները մասնակցությունն են ունեցել իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ տնօրինության կողմից որոշումների կայացմանը | 3 | 2 | 4 |
| Սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունների թիվը | 4 | 4 | 4 |
| Սովորողների կողմից կազմակերպած միջոցառումների թիվը | 4 | 6 | 7 |
| Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովների, սեմինարների, կլոր-սեղանների, քննարկումների թիվը | 0 | 0 | 3 |

Նկարագրել, թե ինչպես է տնօրինությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը

*Հարցերը քննարկվում են աշխորհրդում, աշակերտները համագործակցում են դասղեկի,ուսուցիչների հետ:*

Սովորողների մասնակցությունը իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ տնօրինության կողմից ընդունած որոշումներին և դրանց կայացմանը մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը

| Նկարագրել վերջին 3 տարում քննարկված խնդրահարույց հարցերը և ընդունված որոշումները | Ամսաթիվ | Մասնակից սովորողներիտոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ | Մեկնաբանություն |
|---|---|---|---|
| 1. Նստարանների դիր քրդասարաններում | Տարվա ընթացքում | 25% | |
| 2. Համադպրոցական հերթապահության սահմանում | Տարվա ընթացքում | 50% | |
| 3. Անհարգելի բացակայությունների կրճատում | Տարվա ընթացքում | 95% | |

Սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները և նախաձեռնություններին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը

| Նկարագրել վերջին 3 տարում սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները | Ամսաթիվ | Մասնակից սովորողներիտոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ | Մեկնաբանություն |
|---|---|---|---|
| 1. Ջեռուցում էլեկտրականությամբ | Ջեռուցման սեզոնի ընթացքում | 95% | Կատարված է |
| 2. Դպրոցի բակի ջրափոսերի չորացում | Տարվա ընթացքում | 50% | Կատարված է |
| 3. Թռչնաբների պատրաստում | Տարվա ընթացքում | 20% | Կատարված է |
| 4. Ծառատունկ | Տարվա ընթացքում | 80% | Կատարված է |
| 5.Փոխօգնություն ընկերներին | Տարվա ընթացքում | 70% | Կատարված է |

Սովորողների կողմից կազմակերպված միջոցառումները և միջոցառումներին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը.

| Նկարագրել վերջին 3 տարում սովորողների կողմից կազմակերպված միջոցառումները | Ամսաթիվ | Մասնակից սովորողներիտոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ | Համադպրոցակա ն Կամ դասարանային |
|---|---|---|---|
| 1Առաջին զանգ | Սեպտեմբերի1-ին | 90% | Համադպրոցական |
| 2. Անկախության օր | Սեպտեմբերի21-ին | 85% | Համադպրոցական |
| 3.Ուսուցչի օր | Հոկտեմբերի5-ին | 90% | Համադպրոցական |
| 1. Առարկայական շաբաթներ | Տարվա | 100% | Համադպրոցական |

| | | | |
|---|---|---|---|
| | ընթացքում | | |
| 2. Մերօրյա հերոսները | Տարվա ընթացքում | 100% | Համադպրոցական |
| 3. Թռչունների կյանքը | Ձմռան ամիսներին | 100% | Համադպրոցական |
| 4. Այցելություն գյուղի միայնակ ծերերին | Տարվա ընթացքում | 20% | Համադպրոցական |
| 5. Շաբաթօրյակներ | Տարվա ընթացքում | 100% | Համադպրոցական |
| 6. Տնկիների խնամք | Տարվա ընթացքում | 100% | Համադպրոցական |
| 7. Գիտակներ | | 100% | Համադպրոցական |
| 8. КВН по русскому языку | | 100% | Համադպրոցական |
| 9. Նոր տարի | Դեկտեմբերի վերջին աշխատանքային օրը | 100% | Համադպրոցական |
| 10.Փառք Հայոց բանակին | Հունվար | 100% | Համադպրոցական |
| 11. Մայրենիի պահապանները | Փետրվար | 100% | Համադպրոցական |
| 12. Թումանյանական տասնօրյակ | | 100% | Համադպրոցական |
| 13. Գարուն | Մարտ | 100% | Համադպրոցական |
| 14. Վերջին զանգ | | 100% | Համադպրոցական |
| Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր-սեղանները, քննարկումները և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը | | | |
| Թվարկելվերջին 3 տարում սովորողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր-սեղանները, քննարկումները, նշել դրանց թեմաները | Ամսաթիվ | Մասնակից սովորողներիտոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ | Մեկնաբանություն |
| 1. *Նման դեպքեր չեն եղել* | | | |
| 2. | | | |
| ...... | | | |
| Նկարագրել սովորող - սովորող և սովորող - ուսուցիչ հարաբերություններն ուսումնական հաստատությունում | | | |
| *Սովորող - սովորող և սովորող - ուսուցիչ հարաբերությունները ուսումնականհաստատությունում գտնվում են պատշաճ մակարդակի վրա: Տիրում է փոխադարձ հարգանք, փոխըմբռնում, հանդուրժողականություն, իրար լսելու կարողություն:* | | | |

***Սովորողները ակտիվորեն մասնակցում են դպրոցի առօրյային, կատարում են առաջարկություններ, քննարկում են իրենց հուզող հարցեր, համագործակցում են ուսուցիչների հետ, փոխադարձ հարգանքով են վերաբերվում միմյանց:***

## Աշակերտական համակազմը

**<u>Տեղեկություններ աշակերտների մասին</u>**

| Դասարաններ ը | Աշակերտների քանակը/2021 - 2022/ուստարի | Աշակերտների քանակը/2022 - 2023/ուստարի | Աշակերտների քանակը/2023 - 2024/ուստարի |
|---|---|---|---|
| I | 6 | 4 | 9 |
| II | 5 | 6 | 4 |
| III | 5 | 5 | 6 |
| IV | 6 | 5 | 5 |

| | | | |
|---|---|---|---|
| V | 5 | 6 | 5 |
| VI | 3 | 5 | 6 |
| VII | 6 | 3 | 5 |
| VIII | 4 | 6 | 3 |
| IX | 6 | 4 | 6 |
| | 4<br>6 | 4<br>4 | 49 |

2023-2024 ուստարում դպրոցում սովորում է 49 աշակերտ: Նախորդ տարվահամեմատ սովորողների թիվը ավելացել է 5 աշակերտով: Այս ուստարում դպրոցում կոմպլեկտավորվել է 4դասարան`դպրոց է ընդունվել 9աշակերտ

**. Դասարանների թիվը` ընթացիկ և նախորդ 2ուստարիների[1] համար**

| Դասարանների թիվը | 2021-2022ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամնվազում) |
|---|---|---|---|---|
| 1 -ին դասարան | 1 | 1 | 1 | 0,0 |
| 2-րդ դասարան | 0,5 | 0,5 | 1 | 0,+0,5 |
| 3-րդ դասարան | 0,5 | 0,5 | 0,5 | 0,0 |
| 4-րդ դասարան | 1 | 1 | 0,5 | 0,-0,5 |
| 5 րդ դասարան | 0,5 | 0,5 | 1 | 0,+0,5 |
| 6 -րդ դասարան | 0,5 | 0,5 | 1 | 0+,0,5 |
| 7-րդ դասարան | 0,5 | 0,5 | 1 | 0,+0,5 |
| 8-րդ դասարան | 0,5 | 0,5 | 0,5 | 0,0 |
| 9-րդ դասարան | 1 | 1 | 0,5 | 0,-0,5 |
| Ընդամենը | 6 | 6 | 7 | 0,+1 |

*Դասարանների թվաքնակը ավելացել է 1 ով, քանի որ երկկոմպլեկտ դասարանները 6 իցմնացել է 4-ը :*

## Մանկավարժական համակազմը

Մանկավարժական համակազմը համալրված է փորձառու կադրերով:
Դպրոցի ուսուցչական համակազմը համալրվում է ուսուցչի թափուր տեղի համարհայտարարվող մրցույթով՝ ըստ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգի: Կադրային քաղաքականությունը կրել և կրելու է շարունակական բնույթ,

մանկավարժական համակազմը համալրվելու է նոր բարձրորակ կադրերով: Դպրոցում շատ է կարևորվում ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական զարգացումը. ամեն տարի ուսուցիչների 20 տոկոսը վերապատրաստվում և մասնակցում է հերթական ատեստավորման, գրեթե բոլոր ուսուցիչները մասնակցել են ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացված ՀՊՉ վերապատրաստումներին և, հիմա էլ, մշտական կապը պահում են ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի հետ, շարունակում են մասնակցել նրանց կողմից կազմակերպվող վերապատրաստումներին և խորհրդատվություններին: MS Teams-ում ուսուցիչների մեծ մասը ընդգրկված են ԿԶՆԱԿ-ի կողմից ստեղծված խմբերում և այնտեղ ստանում են իրենց հուզող շատ հարցերի պատասխաններ: Ինչպես արդեն նշվեց, դպրոցի 12 ուսուցիչներից 11-ը մասնակցել է ՀՊՉվերապատրաստումներին, մանկավարժական ողջ համակազմը ծանոթ է չափորոշչային նոր պահանջներին և թեմատիկ պլանավորումը կատարվել է այդ պահանջներին համապատասխան:

***Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ`ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար***

| Ցուցանիշը | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | Փոփոխություններ դինամիկան(աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Ուսուցիչների ընդհանուր թիվը | 11 | 11 | 12 | 0,+1 |
| Ուսուցիչներիմիջինշաբաթականծանրաբեռնվածությունըկամդրույքաչափը | 18,6 | 18,6 | 20,7 | 0,+2,1 |

1

*Ուսուցիչների թվաքանակը փոխվում է, ծանրաբեռնվածությունը կախված է երկհամակազմ դասարանների պակասելուց առաջացած ժամաքանակի ավելացումից: Ուսուցիչների ծանրաբեռնվածությունը նորմայի սահմանում է:*

**<u>Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար</u>**

| Ուսուցիչների թիվը | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Մինչև 30 տարեկան | 4 | 4 | 3 | 0,-1 |
| 31-ից 40 տարեկան | 4 | 4 | 5 | 0,+1 |
| 41ից -50 տարեկան | 2 | 1 | 1 | -1,0 |
| 51-ից -55 տարեկան | 1 | 2 | 2 | +1,0 |
| 56 տարեկան և ավելի | 0 | 0 | 1 | 0,+1 |

ՈՒսուցիչների կազմը երիտասարդ է/միջին տարիքը կազմում է 36,3/

- ***<u>Ծնողական խորհուրդը</u>*** մշտապես իրազեկ է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների միջոցով կազմակերպել է էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ ևայլ միջոցառումներ: Ծնողների հետ համագործակցությունը շարունակվել է նաև համավարակի պայմաններում, 44- օրյա պատերազմի:

## Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցը համագործակցում է համայնքի հետ, աջակցում համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը (շաբաթօրյակ, ծառատունկ):

Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, մասնավորապես՝ ազգային տոներ և տոնակատարություններ, հիշատակի օրեր անցկացնելիս:
Նախատեսվում է ավելի ամրապնդել համագործակցությունը ծնողների հետ:

## Ուսումնական միջավայրը

Ուսումնական միջավայրը հատուկ կազմակերպված հնարավորությունների, գործընթացների և սոցիալական փոխազդեցության համակարգ է, որը տրամադրում է սովորողին ուսուցման և անձնային-մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ, սովորողին կրթում և դաստիարակչական ազդեցություն գործում նրա վրա: Կրթական արդի միջավայրը միավորում է կրթության համակարգի բոլոր տարրերը և թույլ տալիս զուգորդել ուսուցման գործընթացի տարբեր մեխանիզմներ և գործիքներ: Այսպիսով՝ շատ կարևոր է ունենալ հարմարավետ, հրապուրիչ, մոտիվացնող ուսումնական միջավայր: Ուստի, դպրոցի 2024-2029թվականների զարգացման ծրագրում պլանավորված են քայլեր, որոնք միտված են ամբողջացնելու նկարագրված ուսումնական միջավայրը:
Ներքին գնահատման համար կատարված հարցումն ապացուցում է, որ դպրոցում չկան սովորողի նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման, մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքեր: Երեխաները, ինչպես և նրանց ծնողները, համոզված են, որ դպրոցում իրենք լավ պաշտպանված են, դպրոցում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:
Մշտական հոգածության առարկա է սովորողների առողջության պահպանումը:
Խստորեն վերահսկվում են բացակայությունները, ճշտվում ախտորոշումները, պահպանվում են հակահամաճարակային կանոնները: Ախտահանվում են դասասենյակները: Անհրաժեշտության դեպքում դասարանն օպերատիվ կերպով անցնում է հեռավար ուսուցման:
:

## Կրթության որակն՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Մաթեմատիկա 6,3

Հայոց լեզու և հայ գրականություն 6,2

Հայոց պատմություն 7

Ռուսաց լեզու 6,4

***Կրթության որակի ապահովման համար տարվում են հետևյալ աշխատանքները.***

Կազմված են թեմատիկ պլաններ՝ պետական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան

Մեթոդմիավորումները վերահսկում են այդ պլանների կատարումը, դասավանդման որակը

Պարբերաբար կատարվում են մշտադիտարկումներ, առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ

Յուրաքանչյուր դասարանի աշակերտների՝ բոլոր առարկաների արդյունքների վերաբերյալ կազմվում են տեղեկագրեր

Տրվում են հայտորոշիչ գրավոր աշխատանքներ՝ ստուգելու մնացորդային գիտելիքը

Աշակերտների առաջադիմության մասին զեկուցվում է դասղեկների և մեթոդմիավորումների նիստերում

Ըստ անհրաժեշտության՝ անցկացվում են դասարանական խորհրդակցություններ, քննարկվում ծագած խնդիրները, գտնում լուծման ուղիներ

Ապահովվում է ուսուցիչների շարունակական մասնագիտական աճը:Դասապրոցեսում պետք է ներդրվեն նորագույն տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կրթական ռեսուրսներ

**Տեխնոլոգիաները և նորարարությունները**

Դպրոցի կողմից շատ է կարևորվում ՏՀՏ տեխնոլոգիաների ներդնումը դասապրոցեսում:: 2020 թվականի մարտին դպրոցի ուսուցչական կազմը բավականին բարդություններով անցավ հեռավար ուսուցման, պատճառը տեղեկատվական տեղնոլոգիաների պակասն էր, որի լրացման է միտված դպրոցը:

## ՈՒսումնական հաստատության գործունեության՝ առանձնացված յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրները

| Ոլոտ | Խնդիրնր |
|---|---|
| ***Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան*** | Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական /ֆիզիկական/ միջավայրի հարստացում, նյութատեխնիկական բազայի համալրում նոր , ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով |
| ***Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը*** | Արտաբյուջետային միջոցների ստեղծում |
| ***Կառավարման և խորհրդակցական*** | ✓ Ծրջանավարտների խորհրդի ստեղծում |

| | |
|---|---|
| ***մարմիններ*** | ✓ Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև սերտ համագործակցության ամրապնդում |
| ***Մանկավարժական համակազմ*** | ✓ Մանկավարժական համակազմի համալրում հմուտ և փորձառու կադրերով<br>✓ Մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում |
| ***Աշակերտական համակազմ*** | ✓ Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում |
| ***Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ*** | ✓ Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում<br>✓ Համագործակցությունների շրջանակի ընդլայնում<br>✓ Սոցիալ-մշակութային դպրոցի կայացում |
| ***Ուսումնական միջավայր*** | ✓ Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառու- թյունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում: |
| ***Կրթության որակն՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների*** | ✓ Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում<br>✓ Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը միտված միջոցառումների ընդլայնում<br>✓ Օտար լեզուների խորացում, ցանկի ընդլայնում |
| ***Տեխնոլոգիաները և նորարարությունները*** | ✓ Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում<br>✓ ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում<br>✓ Մեդիագրագիտության կարևորում ու զարգացում<br>✓ Մենթորական համակարգի ներդնում |
